* * *

Ինչպիսի հարկեր էին գանձվում Արևմտյան Հայաստանի բնակչությունից: Այս հարցի մոտավոր պատասխանը, ինչպես ասացինք, տալիս են կանոն-նամեները:

Հայկական նահանգներին վերաբերող կանոններում նշված հարկերի մեծ մասը հիմնականում գանձվում էր հայերից, որովհետև անգամ 1635 թ. ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեի ասելով, «Թոխաթից մինչև Թեբրիզ երկիրը բնակված է հայերով» և որ «հիսուն հային ընկնում է մի մուսուլման»[1]:

Պետք է հենց սկզբից նաև նշել, որ ներքոհիշյալ հարկերը բացառությամբ «խարաջ»ի, «ջիզիե»-ի և «իսպենջե»-ի վերցվում էին, ինչպես քրիստոնյա (հայ), այնպես էլ մուսուլման (թուրք, քուրդ, թուրքմեն) ազգաբնակչությունից, իհարկե, ավելի նվազ չափով:

Ընդհանրապես, Օսմանյան կայսրության մեջ հպատակներից գանձվող հարկերը լինում էին երկու տեսակ:

Առաջինը կոչվում էր «օրինական հարկեր» («ռուսում-ի շերիե» Rüsûm-i şeriye), այսինքն շարիաթին համապատասխան: Այս հարկերը հիմնականում գանձվում էին պետության կողմից ու բնորոշում պետության ու հպատակի փոխհարաբերությունները:

Հարկերի երկրորդ տեսակը կոչվում էր՝ «հարկեր ըստ սովորության» («Ռյուսում-ի օրֆիե և կամ «թեքյալիֆի օրֆիե» Rüsûm-i örfiye; tekâlif-i örfiye): Այս հարկերը հիմնականում գանձվում էին տեղերում նշանակված սիփահիների կողմից ու բնորոշում գյուղացու ու ֆեոդալի փոխհարաբերությունները[2]:

Ինչպես բոլոր մուսուլմանական երկրներում, այնպես էլ Թուրքիայում, որպես հողային ու «օրինական» հարկ, մուսուլման բնակչությունից գանձվում էր «ուշրը» (öşr) բերքի մեկ տասներորդ մասը, և երբեմն էլ ավելի: Ոչ մուսուլմաններից (տվյալ դեպքում հայերից) գանձվում էր խարաջ երկու ձևով՝ խարաջ-ի մուկասամա՝ („Harac-i mukaseme", արաբերեն նշանակում է մասնակի, պրոպորցիոնալ խարաջ) և, խարաջի մուվազաֆ (harac-i muvazzaf արաբերեն նշանակում է ծառայության խարաջ), գանձվում էր հողօգտագործման համար[3]:

Որպես «խարաջ ի մուկասամա», գանձվում էր բերքի որոշ մասը: Մուկասաման (մասը, պրապորցիան) կարող էր լինել՝ «ուշր»՝ բերքի մեկ տասներորդ մասը, «խումուս» (արաբերեն)՝ բերքի մեկ հինգերորդ մասը, «ռուբու» (rubu՝ արաբերեն)՝ բերքի մեկ քառորդ մասը, սուլիուս („sulüs, արաբերեն) բերքի մեկ երրորդ մասը, «նըսրֆ» („nısıf", արաբերեն) բերքի մեկ երկրորդ մասը:

Նկատմամբ և պատերազմի ժամանակ յուրաքանչյուր 5000 ակչե եկամտի դիմաց պարտավոր էին բանակին մատակարարել մի ռազմիկ՝ «ջերեջի» անունով: Սրանց մասին տե՛ս Այնի Ալիի մոտ՝ նրա հետևյալ աշխատությունում. „Kavanin-i Âli Osman der hulese-i mezamini-defter-i divan թարգմանությունը M. Belin-ի, Journal Asiatique, 1870, t. XV, p. 239—274.

[1] *Jean Baptiste Tavernier*, Les six voyages de Jean Baptiste Tavernier, Paris 1713, p. 39.

[2] Տե՛ս *Boris Christoff Nevkoff* „Osmanlı Imperatorlugunda cizye (Türk tarih kurumu Belleten, cilt VIII, teşrin 1944, S. 617).

[3] Տե՛ս Էբու-սու'ուդի հողի վերաբերյալ կանոնները, „Ulkü", 1938, cilt XI, s. 344.